ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի հունիսի 17-ի թիվ 1 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ « **ՀՀԳՄՎՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/19**»

Վարդենիսի համայնքապետարանի կարիքների համար **Վարդենիս համայնքի 4 բնակավայրերում ոռոգման ջրի ջրագծերի կառուցման և 1 բնակավայրում խորքային հորի վերակառուցման աշխատանքների** ձեռքբերման նպատակով կազմակերպված « ՀՀԳՄՎՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/19» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2025թ. հունիսի 16-ին ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 2025թ. հունիսի 17-ին տրամադրված պարզաբանումները՝

Ի պատասխան ներկայացված հարցմանը տրամադրում ենք հետևյալ պարզաբանումը.

Պ/Հ	Հարցադրում	Պարզաբանում
1	Հարգելի՛ պատվիրատու, Ուսումնասիրելով Ձեր կողմից ՀՀԳՄՎՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/19 ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի 1-ին չափաբաժում ընդգրկված Ծովակ բնակավայրի ոռոգման ներքին ցանցի և սելաֆատարի կառուցման աշխատանքների ծավալաթերթ-նախահաշիվը, հայտնաբերել ենք որ Ճյուղ 1 բաժնի 2-րդ տողում 3-րդ կարգի գրունտի մշակում էքսկավատորով խրամուղում 0.6մ խոր 0.5մ3 շերեփի տարողությամբ կողալիցքով աշխատանքների քանակը տրված է 15420 մ3, ինչպես նաև նույն տողը Ճյուղ 2-ում քանակը տրված է 24620 մ3: Խնդրում եմ վերոնշյալի վերաբերյալ տալ պարզաբանում, թե արդյո՞ք նշված տողերի քանակները ճիշտ են:	Ձեր հարցումը ուսումնասիրվել է, ծավալաթերթ-նախահաշվում հայտնաբերված անհամապատասխանությունը կշտկվի նախագծող կազմակերպության կողմից, ուստի հրավերում կկատարվի փոփոխություն:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել « ՀՀԳՄՎՀ-ՀԲՄԱՇՁԲ-25/19» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Արևիկ Մելքոնյանին:

Հեռախոս +37498288063
Էլ. փոստ vardenis.gnumner@mail.ru